ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 23

31 հունվարի 2020 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՐԱ ԿԱՄՍԱՐԻ ՄԱՐՏՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արա Կամսարի Մարտոյանի կողմից /ծնված 1978 թվականի հուլիսի 26-ին/ դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի 10-րդ փողոց թիվ 2 հասցեում իր սեփականության իրավունքով 0,412 հեկտար հողամասում /սեփականության վկայականի N1395574/ ինքնակամ կառուցված 43,39 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տանը կից կցակառույցը, 83,53 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, որը չի ընդգրկում 60-րդ հոդվածի դրույթները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի, 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն և Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման>> կարգի 11-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով , որ կառույցը պահպանելը չի խանգարում այլ անձանց իրավունքները, կառույցը կառուցված չէ ինժիներատեխնիկական օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում չի առաջացնում հարկադիր սերվիտուտի իրավունք և հաշվի առնելով Արա Կամսարի Մարտոյանի դիմումը որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի 10-րդ փողոց թիվ 2 հասցեի սեփական հողամասում 0,412 հեկտար /ծածկագիր 08-044-011-014/ բնակելի կառուցապատման հողամասում Արա Կամսարի Մարտոյանի կողմից ինքնակամ կառուցված 43,39 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան կցակառույցը և 83,53 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

Սահմանել, որ սեփականատերը

2.Սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում Անի համայնքի բյուջեի 900495101447 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 18-րդ կետի ա ենթակետով

ա/ բնակելի տան կցակառույցի շինության համար վճարի չափը կազմում է 43,39ք/մ x 10000 x 0,037=16054,3 Հայաստանի Հանրապետության դրամ:

բ/ ավտոտնակի համար վճարի չափը կազմում է 83,53 ք/մ x 6000 x 0,037=18543,66 Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2020 թվականի հունվարի 31

քաղաք Մարալիկ